Որ հառաչանք վերացուցին ըզշըրթունս,
Զաւալեցաւ ծընունդ սըրտին յընդհանուր,
Ուսաձայնանչ տարաւ յերկին սուրբ աչկունս,
Ի հընոցէ սիրոյն հատաւ շունչ ի հուր...
"Աստուած, կեցո զՀայաստան..."
Նա անդ եկաց սրտին բան։

Ո եղեալ ընդ կողմն՝ ուր ելք արփիոյ արեւուն
Յուպ ի կըզակ մատուցաներ ալեզարդ,
Լանջ յողջախոհ փարեր բազկօք երերուն,
Դէմ Հարչին կայր նախաստեղծն իբր ըզմարդ,
Ել յընդունել կոյս հոգի
Եւ յաւանդել բարեխի։

Աստուածակառք ընդ ձանապարհըս Թագուն
Ուսեղինաց եկեալ դաստուց ողջոյն տան,
Կէնք ի Թիկանց և կէնք զոտիւք սրբասուն,
Աստուածակիր սուրբ տաճարին նեցուկ կան,
Նա ոչ անդող անեղեր
Կարդան հոգւոյն այն հրաւէր։

Ուծանին կապք. և շունչըն մեծ ի վեր կոյս
Իբր ըզՅաղթողըն դրժոխոց գործէ ելս.
Նա վառ ի վառ ծածանին դրօշքն ոսկելոյս
Որ ի յերկնուստ կորզեաց գոլով դեռ յերկրէս.
Նա ըզնուաւ պարեն հոծ
Գասաք դասաք նուաւ փրկելոց։

Ակ ի ներքուստ հեռուստ յերկրէ խորաձոր
Արտէս հրաբուխ ի գիշերի բոցահատ
Արից Աեպհոյ փայլեն կատարք շողաւոր.
Որ միանգամ և ակնարկեալ Աուրբն անյաղթ՝
Կոխէ զխորանս Ընձահին
Հայաստանեայց աչրն ի բուին։

Հ. Դ. Մ

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նոր վէպ։ ամփիւնէատրոնը։

ՆՈՎՄԱՑՈՒ հին շէնքերուն մէջ ասն ամփիւնէատրոնն վաեմը չկայ։ Ինն տուն ասն շէնքը Վլաքեան ամփիւնէատրոն կ'ըսուէր՝ Աեսպասիանոս և Տիտոս կայսերաց անուամբը, որ Վլաքեան ազգատոհմին էին. հայրը սկսաւ շինել, որդին լըմընցուց Վրիստոսի 76 Թուականին՝ Երուսաղէմին քերած Հրեայ գերիները աշխատեցընելով, որ հինգ տարուան մէջ լմընցուցին։ Դրսուանց աշտարակի մը կը նմանի, ու 150 ոտնաչափ բարձրութիւն ունի, բայց շէնքին չորս կողմը դիզուած հողուն պատճառաւ աւելի ցած կ'երեւնայ։ Իրեք յարկ ունի կամարներով շինած, ու քանդակագործ սիւներով զարդարուած. վարի յարկը դորացի Ձար-



Հռոմայեցւոց ամֆիթէատրոնը կամ Կօլոսէօն [1]։

տարապետութեամբ շինած է, իսկ վերջայինները յոնիացի և կորնթական ձարտարապետութեամբ։ Ը էնքերին վրան ուրիշ քարձր պատ մըն ալ կայ, որ չորրորդ յարկի տեղ է, բայց մկկանոնց աղուորութիւնը չունի։ Ի՛ր մեծագործ ամֆիթէատրոնին երկայնութիւնը 620 ոտնաչափ, լայնութիւնը 513 է. շրջապատը ութսուն կամար ունի՝ դէպ 'ի լայնքը ու երկայնքը դիմացէ դիմաց ձգուած. կամարներուն մէջէն հին ատենը մեծամեծ գազաններ կ'անցնէին՝ հանդիսի համար։ Ը էնքերին ձևը ձուաձև է. կամարներուն վրայ եղած թուանշանները ինչուան հիմա կը տեսնուին, և հանդիսականները ինչ թուանշանով տոմսակ որ կ'առնէին՝ նոյն նշանը ունեցող կամարին տակ կը մտնէին։ Ի՛ր կամարներուն ետևը ուրիշ իրեք կարգ կամարներ ալ կային, որ օդը գէշ եղած ժամանակը ժողովուրդը անոնց տակը կը մտնէր։ Ի՛ր գտիկոնէն վեր ելլելու համար քսան մեծ սանդուխ և երեսունևերկու պզտի սանդուխ կար, և ան սանդուխներուն գլուխը ճամբաներ կային, ուսկից ժողովուրդը կը մտնէր ու կ'ելլէր։ Նոյն սանդուխներուն քով սենեակներ ալ կային, որոնց մէջ անշուշտ կը փակէին խեղճ գերիները, որոնք սուրի կամ գազանաց ժանիքներուն տակ արիւնին կը թափէին՝ անգութ Հռոմայեցւոց զուարճութիւն պատճառելու համար։

Ի՛ր յիսունևերկու սանդուխներէն մէկը Պոտիում [1] ըսուած սրահը կը հասնէր, որ անմիջապէս Թատրոնին մէջ տեղին վրայ կը նայէր. բոլոր մարմարիոն քարերով պատած էր, և տասուերեք ոտնաչափ լայնութիւն ու տասնըչորս ոտնաչափ բարձրութիւն ունէր. հոն ուրիշներէն բարձր աթոռի մը վրայ կը նստէր կայսրը, անոր քովը կը նստէին ատենակալները. նոյն սենեկին մէջ մանաւոր տեղ ունէին նաև Վեստեան կուսանքը [2], քիչ մը հեռուն ալ օտար տէրութեանց դեսպանները և Հռոմայեցւոց դաշնակից Թագաւորները կը նստէին։ Պոտիոնը թէպէտ և բաւական բարձր էր, բայց առիւծներու և վագրներու յանկարծական ու կատաղի յարձակմունքէն աւելի պաշտպանելու համար, դիմացը առանցքին վրայ դարձող գլաններ, երկրթէ խայթոցներ, ու ոսկի վանդակներ կը դնէին։ Թատրոնին մէջ տեղը կամ կրկէսը գրեթէ մէկ լծաձաւր [3] էր. ժողովուրդը ամֆիթէատրոնին աստիճաններուն վրայ կը նստէր, և վրանին չուաններով յարմարցուցած հովանոցներ [4] կային, որոնք արև կամ անձրև եղած ժամանակը կը քաշէին, և ուզած տեղնին կ'ամփոփէին։ Պոտիոնին ետևը վրայէ վրայ երկու աստիճաններ կային, որոնցմէ

1 Գաղղիացիք Colysée կ'ըսեն սա շինքին, որ Լատինի Colossus կամ Colosseus բառէն եղած է, որ մեր Խոշոր բառին նման է նշանակութեամբ։

1 Լ. Podium.

2 Վեստեան կուսանքը աղնուական օրիորդներ էին, որոնք կրակի Վեստա չաստուածուհւոյն նուիրուած սրբազան կրակը միշտ վառ կը պահէին, և կոյս կը մնային։

3 Տէօնիմ։ 4 Թէնիւէ։

իւրաքանչիւրը քառասունը չորս կիսաբո-
լոր նստարաններ ունէին, և 25,000
հանդիսական կ'առնէին. ասոնց աստիճան-
ներէն քիչ մը հեռու ու աւելի բարձր
երկու աստիճաններ ալ կային, ուր որ
կանայք կը նստէին։ Կ'ըսեն թէ ամիփի-
թէատրոնին մէջ ինչուան հարիւր հա-
զար հանդիսական կը տեղի եղեր, բայց
սա բանս յայտնի չափազանցութիւն
կ'երեւնայ. սակայն թէ որ կէսն ալ առ-
ներ՝ դարձեալ զարմանալի բան է։

Այս մեծագործ և հակայաձև ամիփի-
թէատրոնը շինելու համար յիսուն մի-
լիոն ֆռանք գնացեր է. որ որչափ Յու-
ռովմայեցւոց մեծագործութեան նշան
եղաւ՝ նոյնչափ ալ իրենց անգթութեա-
նը, որ ասանկ անգութ տեսարաններ
շատցնելով՝ Յունաց թատրոնական
խաղարկութիւնները չծաղկեցուցին։

Արկէսին մէջ կը մնային երկու տե-
սակ սուսերամարտիկներ. մէկ մը ա-
նոնք՝ որոնց բռնի տրվեցընել կուտային
նոյն արուեստը, մէկ մըն ալ անոնք՝ որ
իրենց յօժարութեամբը կը մնային։
Այս սուսերամարտիկներէն շատերը գե-
րիներ, բանտարկեալներ, ապստամբ-
ներ էին, որոնք յաղթական կամարներ
և ուրիշ շինքեր շինելու ծառայեցընե-
լէն ետև՝ կը ծախէին, ու հասարակաց
ահաւոր խաղերուն կը պահէին։ Այլ
շատ անգամ նոյնիսկ ազատ քաղաքացիք,
իշխանաւորք և ուրիշ երևելի անձինք
ալ ընդունայն փառասիրութենէ մը
շարժած կամ պակաս առնելու մտքով՝
նոյն խաղերուն մէջ կը մտնէին ու
կեանքերնին կը վտանգընէին. ինչուան
երբեմն նոյնիսկ կանայք ու գաճաճ մար-
դիկ կրկէս կը մտնէին։ Այդպէս սուսե-
րամարտիկներէն մէկը վիրաւորուելը,
զէնքերը մէկդի կը նետէր, ու կրկէսին
մէկ կողմը գալով ժողովրդեան կ'աղա-
չէր որ զինքը ազատեն։ Եթէ որ կորը-
ծումեամբ պատերազմեր էր, ժողո-
վուրդը զինքը կը խալըսեր, իսկ թէ որ
թուլութեամբ պատերազմեր էր, կամ
թէ ժողովուրդը իրեն կողմը չըլլար,
ան ատեն հանդիսականք բումբ մատեր-
նին կը ծռէին ու խեղճ գերին մորթել
կուտային, ասով անհաւատալի մարդ ջար-
դուած է Հռովմայ ամիփիթէատրոնին
մէջ։ Այդպիսի մարդկանց տեղ գազան-
ներ կը կռուեցընէին, և սա քանիս հա-
մար ալ անթիւ գազաններ ջարդած են։
Այդպէս Տիտոս առջի անգամ՝ սա ամիփի-
թէատրոնը բացաւ՝ 500 հազար կեն-
դանի ժողվել տուած էր, նապաստա-
կէն սկսեալ ինչուան առիւծ, վագր,
փիղ. սոնք մէկ օրուան մէջ իրարու
հետ կռուեցընել տալով՝ ամէնն ալ մե-
ռան, ու կրկէսը արիւնլուայ եղաւ։
Այլ նոյն միջոցին գազաններուն կա-
տաղութենէն աւելի էր ժողովրդեան
վայրենութիւնը, որուն ձայնը գազան-
ներուն ձայնը կը խափանէր, և ան
սոսկալի տեսարանով կը զուարճանար։
Այդպիսի գազաններուն հետ գերիներ
ալ կը խառնէին. նաև շատ մարտիրոս-
ներ նոյն կրկէսին մէջ իրենց արիւնը
թափեցին, ինչպէս սուրբն Իգնատիոս
Աստուածազգեաց Հայրապետը։

Հիմա սա կրկէսին մէջ տեղը մեծ
խորան մը շինած, վրան ալ խաչ մը
տնկած է. կրկէսին չորս բոլորտիքն ալ
տասնըչորս հատ պզտիկ խորաններ կան։
Այսոնք Վենեդիկտոս ԺԴ պապը շինել
տուաւ, և ջանաց որ սա մեծ աւերակը
որչափ կարելի է անաղարտ պահուի։
Այդքի պապերն ալ շատ ծախք ըրած
են որ սա հիանալի շինքը չկործանի. ու
հոս հանդիսով կը կատարեն Ճանապարհ
խաչէ բռնած Ջերմեռանդութիւնը։

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Վասն մը օրինակ արհեստից պերճութեան։

Ամէն որ ամէն բան չափ պիտի ունե-
նայ, սկսաք է մեծագործութիւնն ալ
ունենայ, բայց ինչպէս որ չափը գտնե-
լը դժուար է, մեծագործութեան ալ
շռայլութիւն փոխուիլը շատ դիւրին է
պատմութեանց մէջ կը յիշատակուի
ասանկ շռայլութեանց համար պերճու-